Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն գյուղի <<Հայկաշենի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի երկու դաստիարակի (0,56 դրույք), երաժշտական դաստիարակի (0.25 դրույք), մեթոդիստ ուսումնական գծով՝ տնօրենի տեղակալ (0.25 դրույք) թափուր պաշտոնները համալրելու համար:
Վերոհիշյալ պաշտոնների համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ հիմնադրի դրույքաչափի:
Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված հարցաշարերի:
Մրցույթին մասնակցելու համար անձը պատասխանատու աշխատակցին պետք է ներկայացնի՝

1. դիմում (Ձև 1)
2. կրթության մասին փաստաթուղթ՝ դիպլոմ
3. անձը հաստատող փաստաթուղթ
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ
5. ինքնակենսագրություն՝ Ձև 4
6. լուսանկար 3x4 չափի
7. այլ պետության քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են զինվորական գրքույկ, կամ զինվորական կցագրման վկայական:
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչում հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
10. որակավորման տարակարգ (առկայության դեպքում)

Փաստաթղթերի պատճենները անհրաժեշտ է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մարտի 24 ներառյալ՝ ամեն օր ժամը 10:00 ից 15:30, բացի ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթի անցկացման օրը՝ 30. 03. 2023 ժամը՝ 12:00-ին տեղը՝ գ. Հայկաշեն <<Հայկաշենի մանկապարտեզ>> ՀՈԱԿ, 9փ 28տ , հեռ +37494800675